ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

20 ապրիլի 2022 թվական քաղաք Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի Արտյոմ Սեդրակյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության՝ աշխատավարձի հասանելիք գումարները վճարելուն և դրանց հաշվարկը մինչև պարտավորության փաստացի կատարումը շարունակելուն պատասխանողին պարտավորեցնելու պահանջի մասին, թիվ ՎԴ/6636/05/21 գործով ենթակայության մասին վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի ապրիլի 11-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Արտյոմ Սեդրակյանը 2021 թվականի հունիսի 10-ին հայցադիմում է ներկայացրել Վարչական դատարան՝ ընդդեմ ՀՀ ոստիկանության, որով պահանջել է պարտավորեցնել պատասխանողին վճարել իրեն հասանելիք գումարները՝ 15.050.148 (տասնհինգ միլիոն հիսուն հազար հարյուր քառասունութ) ՀՀ դրամ (12.607.698 ՀՀ դրամը՝ որպես հարկադիր պարապուրդի հետևանքով չվճարված աշխատավարձի գումար, 2.442.450 ՀՀ դրամը՝ որպես չօգտագործված արձակուրդի

համար հասանելիք արձակուրդային և միանվագ արձակուրդային վճար), դրա նկատմամբ հաշվարկված՝ վճարման ենթակա բանկային տոկոսները՝ 3.612.036 (երեք միլիոն վեց հարյուր տասներկու հազար երեսունվեց) ՀՀ դրամի չափով՝ դրանց հաշվարկը շարունակելով մինչև պարտավորության փաստացի կատարումը:

2. Վարչական դատարանը (դատավոր՝ Դ.Դանիելյան) 2022 թվականի փետրվարի 28-ին որոշում է կայացրել հայցադիմումը վերահասցեագրելու մասին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(...) Դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում հայցվոր Արտյոմ Սեդրակյանի և պատասխանող ՀՀ ոստիկանության միջև վեճը, ըստ ներկայացված հայցադիմումի և դրանով ներկայացված պահանջի իրավական և փաստական հիմքերի, վերաբերում է հայցվորի՝ որպես ոստիկանությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցրած անձի, իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման ժամանակահատվածում գործատուի կողմից չվճարված աշխատավարձի բռնագանձմանը, այլ հայցվորի՝ որպես թիվ ԵԷԴ/0059/01/15 քրեական գործով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 29.12.2017թ. կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճռով արդարացվածի, պատճառված վնասի (այդ թվում՝ զրկված աշխատավարձի) հատուցմանը, որը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի իրավակարգավորումներով և կատարվում է միայն քաղաքացիական դատավարության կարգով՝ քաղաքացիական հայցի լուծումից հետո: Այսինքն՝ սույն վեճը կապված է ոչ թե հայցվոր Արտյոմ Սեդրակյանի՝ ՀՀ ոստիկանությունում քաղաքացիական հատուկ ծառայության իրականացման հետ, նաև այն հաշվառմամբ, որ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքով քրեական հետապնդման ենթարկված, այնուհետև՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով արդարացված, ոստիկանությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցրած անձին այդ ժամանակահատվածի համար աշխատավարձի վճարման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորված չեն («Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի դրույթները վերաբերում են ոստիկանության ծառայողներին, այլ ոչ թե ոստիկանությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն*

զբաղեցնող անձանց), այլ ապօրինի դատապարտվելու հետևանքով պատճառված վնասի հատուցում ստանալու հետ, որպիսի իրավահարաբերությունները կարգավորված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածով: Հետևաբար, նկատի ունենալով, որ արդարացվածին հասցված վնասի հատուցման օրենսդրական կանոնի համաձայն՝ տվյալ վնասի հատուցումն իրականացվում է ՀՀ քաղաքացիական դատավարության կարգով՝ հայց հարուցելու միջոցով, միաժամանակ հաշվի առնելով, որ վիճելի իրավահարաբերությունը կարգավորվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան նորմերով, Դատարանը գտնում է, որ սույն վեճով գործը ենթակա է քննության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից:

Այսպիսով, վերոգրյալ պատճառաբանությունների հաշվառմամբ, Դատարանը գտնում է, որ Արտյոմ Սեդրակյանի կողմից հայցադիմումով ներկայացված պահանջն ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին, այլ ընդդատյա է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հետևաբար հայցադիմումը պետք է վերահասցեագրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան»:

3. Թիվ ՎԴ/6636/05/21 գործը 2022 թվականի մարտի 9-ին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ.Տաշչյանին:

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Մ.Տաշչյան) 2022 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ, գործի ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու նպատակով, գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ ներկայացնելով հետևյալ պատճառաբանությունները. *«(...) Դատարանը գտնում է, որ վիճելի իրավահարաբերության կողմերից մեկը ՀՀ ոստիկանությունն է, որը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի իմաստով վարչական մարմին է, ինչն ընդունել է նաև հայցվորը՝ հայցը ներկայացնելով ՀՀ ոստիկանության դեմ:*

Հաշվի առնելով այն, որ աշխատավարձի վճարման պահանջը ներկայացվել է հայցվորի գործատու հանդիսացող ՀՀ ոստիկանության դեմ՝ Դատարանը գտնում է, որ կողմերի միջև առաջացած վիճելի իրավահարաբերությունն ունի աշխատանքային բնույթ և բխում է այդ հարաբերություններից: Միաժամանակ, հարկ է նշել, որ հայցվորի պահանջը վերաբերում է կադրերի ռեզերվում գտնվելու ժամանակահատվածում չստացված աշխատավարձի բռնագանձմանը գործատու հանդիսացող ՀՀ ոստիկանությունից: Դատարանի գնահատմամբ՝ այդ պահանջը կապվում է հանրային ծառայության իրականացման հետ և ունի վարչական բնույթ և ոչ թե ուղղված է գործատուի և աշխատողի միջև զուտ աշխատանքային բնույթ ունեցող հարաբերությունների կարգավորմանը, այլ արդարացման արդյունքում դրամական բավարարում ստանալու իրավունքի ապահովմանը:

(…)

Տվյալ դեպքում, Դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ կիրառելի են հանրային ծառայությունը կարգավորող իրավանորմերը և վեճը չի կարգավորվում բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքի նորմերի հիման վրա, ևս մեկ ցուցիչ է, որ վեճի բովանդակությունը կազմում են հանրային իշխանական լիազորությունների իրականացման հետ կապված հարաբերությունները: Այլ կերպ ասած՝ կողմերի միջև առաջացած փոխհարաբերություններն ուղղված չեն աշխատողի աշխատանքային պարտականությունների կատարմանը կամ աշխատանքային իրավունքների իրացմանը՝ զուտ ՀՀ աշխատանքային օրենսգրքով կարգավորմամբ, այլ ուղղված են արդարացվածի՝ դրամական բավարարում ստանալու իրավունքի ապահովմանը այն ժամանակահատվածի համար, երբ նա գտնվել է ռեզերվում: Ավելորդ չէ նաև նշել, որ ռեզերվում գտնվելու ընթացքում գործատուից նման դրամական բավարարում ստանալու իրավունքը նախատեսված է հատուկ օրենսդրությամբ՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքով:

Ուստի, կողմերի միջև առաջացած վիճելի իրավահարաբերությունը ոչ թե զուտ աշխատանքային գործառույթների հետ է կապված, այլ ուղղված է հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի կողմից իր իշխանական լիազորություններն իրականացնելու պարտականության կատարմանը: Այսինքն՝

ՀՀ ոստիկանությունն ունի օրենքով սահմանված պարտականություն՝ կապված արդարացված լինելու հիմքով ՀՀ ոստիկանությունում քաղաքացիական հատուկ ծառայություն իրականացնելու հետ կապված աշխատանքում վերականգնված լինելու պայմաններում Արտյոմ Սեդրակյանին ոստիկանության ռեզերվում գտնվելու ժամանակահատվածում չվճարված աշխատավարձ վճարելու հետ, ինչն էլ հայցվորի հանրային սուբյեկտիվ իրավունքների իրացման անհրաժեշտ և բավարար պայման է:

Այսպիսով, տվյալ դեպքում, Դատարանը գտնում է, որ վերոհիշյալ պատճառաբանությունների հիմքով, կողմերի միջև ծագել են ոչ թե զուտ աշխատանքային բնույթի, այլ հանրային-իրավական բնույթի հարաբերություններ, որի վերաբերյալ վեճը ենթակա է լուծման վարչական դատավարության կարգով, ուստի սույն գործը ենթակա է քննության ոչ թե ընդհանուր իրավասության դատարանի, այլ վարչական դատարանի կողմից»:

5. Թիվ ՎԴ/6636/05/21 գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի ապրիլի 13-ին:

Ենթակայության մասին վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքը.

6. Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 29-ի դատավճռով թիվ ԵԷԴ/0059/01/15 գործով ճանաչվել և հռչակվել է Արտյոմ Գևորգի Սեդրակյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 312.1-րդ հոդվածի 2-րդ մասով և 314-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքների կատարման մեջ: Արտյոմ Գևորգի Սեդրակյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 312.1-րդ հոդվածի 2-րդ մասով և 314-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցվել է, իսկ որպես խափանման միջոց ընտրված գրավը՝ վերացվել:

Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.

7. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *օրինական ուժի մեջ մտած դատավճռով արդարացված հանրային ծառայողին քրեական հետապնդման ժամանակահատվածում չվճարված աշխատավարձի փոխհատուցման հետ կապված հարաբերությունները ծագում են հանրայի՞ն, թե մասնավոր իրավահարաբերություններից:*

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

9. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:*

2. Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի (...)»:

Նույն օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

10. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, ներառյալ՝*

1) հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը. (...)»:

Նույն օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության»:*

11. Սույն որոշման 8-10-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերի քննությունը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

12. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին մանրամասն անդրադարձ է կատարվել Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ*[1]:

13. Սույն գործով վիճելի իրավահարաբերության բնույթը պարզելու համար անհրաժեշտ է վերլուծել արդարացվածի՝ նյութական վնասների հատուցում պահանջելու իրավահարաբերությունները կարգավորող իրավական նորմերը:

[1] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

14. Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու, վարչական տույժի ենթարկելու հետևանքով պատճառված վնասը, օրենքով սահմանված կարգով, լրիվ ծավալով հատուցում է Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ հետաքննության, նախաքննության, դատախազության և դատարանի պաշտոնատար անձանց մեղքից»:*

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Արդարացվածն իր իրավունքների վերականգնման, այդ թվում քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից իրեն պատճառված նյութական վնասի հատուցման իրավունք ունի»:*

Նույն օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Արդարացված է այն անձը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել կամ քրեական գործով վարույթը կարճվել է սույն օրենսգրքի 35 հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով և երկրորդ մասով նախատեսված որևէ հիմքով, կամ որի նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ»:*

Նշված հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Արդարացվածն իրավունք ունի նաև պահանջել իրեն անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու և դատապարտման հետևանքով պատճառված վնասի գույքային հատուցում ամբողջ ծավալով՝ հաշվի առնելով իրական հնարավոր բաց թողնված օգուտները»:*

Նույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *«Արդարացվածը որպես հատուցում իրավունք ունի ստանալ աշխատավարձը, թոշակը, նպաստները, այլ եկամուտներ, որոնցից նա զրկվել է. (...)»:*

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *«Այն դեպքում, երբ քրեական գործի վարույթը կարճվել է, քրեական հետապնդումը դադարեցվել է կամ արդարացման դատավճիռ է կայացվել հանցակազմի բացակայության հիմքով, սույն հոդվածով նախատեսված վնասի հատուցումը կատարվում է միայն քաղաքացիական դատավարության կարգով՝ քաղաքացիական հայցի լուծումից հետո»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Արդարացվածին պատճառված վնասը հատուցվում է քաղաքացիական դատավարության կարգով»:*

16. Արդարացվածի՝ նյութական վնասների հատուցում պահանջելու իրավունքի ծագման և իրացման հիմնախնդիրներին Վճռաբեկ դատարանն անդրադարձ է կատարել *Գոգո և Վալի Ամոյաններն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ քաղաքացիական գործով 2015 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ*[2]*:* Նշված որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է. *«(…) Առաջնորդվելով արդարացվածի կարգավիճակի առանձնահատկություններով, մասնավորապես՝ վերջինիս իրավական և սոցիալական վիճակի արդյունավետ վերականգնման անհրաժեշտությամբ, ինչպես նաև վերը նշված սահմանադրաիրավական ու միջազգային իրավական պահանջներով՝ օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում և ՀՀ քաղաքացիական օրենսգրքում սահմանել է արդարացվածին պատճառված վնասների հատուցման իրավունքը: Մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում օրենսդիրը նախատեսել է արդարացվածի՝ իր իրավունքների վերականգնման, այդ թվում քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից իրեն պատճառված նյութական վնասի հատուցման իրավունքը: Օրենսդիրը սահմանել է, որ արդարացվածն իրավունք ունի պահանջելու իրեն անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու և դատապարտման հետևանքով պատճառված վնասի գույքային հատուցում ամբողջ ծավալով հաշվի առնելով իրական վնասը, ինչպես նաև հնարավոր բաց թողնված օգուտները: Արդարացվածը որպես հատուցում իրավունք ունի ստանալու աշխատավարձը, թոշակը, նպաստները, այլ եկամուտներ, որոնցից նա զրկվել է, ինչպես նաև վճարված դատական ծախսերը, փաստաբանին վճարված գումարները: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում օրենսդիրը սահմանել է նաև, որ արդարացվածին պատճառված վնասի հատուցումն իրականացվում է ՀՀ քաղաքացիական դատավարության կարգով (…)»:*

[2] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ԵԿԴ/3025/02/11 որոշումը:

17. Սույն որոշման 14-16-րդ կետերում վկայակոչված իրավանորմերի և իրավական դիրքորոշումների վերլուծությունից հետևում է, որ անձն արդարացվածի կարգավիճակ ձեռք բերելու փաստի ուժով ստանում է նաև անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու և դատապարտման հետևանքով խախտված իրավունքների վերականգնման, ինչպես նաև պատճառված վնասի հատուցման (ռեաբիլիտացիայի) իրավունք, ինչը երաշխավորվում է ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքով: Մասնավորապես, արդարացվածն իրավունք ունի պահանջել քրեական վարույթն իրականացնող մարմինների գործողությունների հետևանքով իրեն պատճառված նյութական վնասի ամբողջ ծավալով հատուցում[3], ինչը, ի թիվս այլնի, ներառում է նաև քրեական հետապնդման ժամանակահատվածում վերջինիս չվճարված աշխատավարձի փոխհատուցումը: Դրան զուգահեռ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու, վարչական տույժի ենթարկելու հետևանքով պատճառված վնասը հատուցվում է լրիվ ծավալով:

Այլ կերպ՝ քրեական վարույթն իրականացնող մարմինների գործողությունների հետևանքով անձին պատճառված վնասի հատուցման ***միակ հիմքը նրա՝ արդարացվածի կարգավիճակ*** ձեռք բերելու հանգամանքն է, որը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի և 67-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, իրականացվում է միայն քաղաքացիական դատավարության կարգով: Ընդ որում, վերոնշյալ կարգավորումն իմպերատիվ բնույթ է կրում, և որևէ տարբերակում՝ պայմանավորված արդարացվածի անձով, նրա զբաղեցրած պաշտոնով, պատճառված վնասի բնույթով ու դրա վերականգման կոնկրետ եղանակով, չի նախատեսվում. պատճառված վնասի հատուցումը գտնվում է քաղաքացիական օրենսդրության կարգավորման տիրույթում և կատարվում է միայն քաղաքացիական դատավարության կարգով:

[3] Տե՛ս, մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 9-րդ մասերը:

17.1. Այսպիսով, վնասների հատուցում ստանալու իրավունքը պայմանավորված է անձի՝ որպես մասնավոր սուբյեկտի, ***արդարացվածի կարգավիճակ ձեռք բերելու փաստով,*** ուստի այս առումով վերջինի՝ աշխատանքային գործառույթներով պայմանավորված կարգավիճակը, մասնավորապես՝ հանրային ծառայող հանդիսանալը, երկրորդային բնույթ է կրում: Հավասարապես երկրորդային է նաև այն հանգամանքը, թե ով է հանդիսանում խախտված իրավունքի վերականգնման հասցեատերը՝ հանրային իշխանական լիազորություններով օժտված կոնկրետ վարչական մարմինը, թե այլ մարմին. արդարացվածի և համապատասխան իրավասու մարմնի միջև անձին ապօրինի քրեական հետապնդման ենթարկելու կամ դատապարտելու արդյունքում պատճառված վնասների հատուցման վերաբերյալ իրավական վեճը բխում է մասնավոր իրավահարաբերություններից, գտնվում է ՀՀ քրեական դատավարության և քաղաքացիական օրենսդրության կարգավորման շրջանակներում, ուստի ռեաբիլիտացիան կարող է պահանջվել միայն քաղաքացիական դատավարության կարգով:

18. Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ հարկ է փաստել, որ գործատուին ուղղված՝ չստացած աշխատավարձը որպես հատուցում վճարելու պահանջը բխում է ոչ թե հանրային ծառայողի և գործատուի միջև գոյություն ունեցող աշխատանքային իրավահարաբերություններից, այլ հանրային ծառայողի՝ ***արդարացվածի կարգավիճակ ձեռք բերելու*** պայմաններում ապօրինի քրեական հետապնդման ենթարկվելու և դատապարտվելու համար վերջինիս հասանելիք վնասի հատուցման կապակցությամբ ծագող իրավահարաբերություններից, ինչը որևէ դեպքում չի կարող համարվել հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու կամ այդ ծառայությունից ազատելու հետ կապված վեճ և դիտարկվել հանրային շահի տիրույթում:

Հետևաբար, օրինական ուժի մեջ մտած դատավճռով արդարացված հանրային ծառայողին քրեական հետապնդման ժամանակահատվածում չվճարված աշխատավարձի փոխհատուցման հետ կապված հարաբերությունները ծագում են մասնավոր իրավահարաբերություններից:

19. Այսպիսով՝ սույն գործով Արտյոմ Սեդրակյանի և ՀՀ ոստիկանության միջև ծագած վեճը վերաբերում է Արտյոմ Սեդրակյանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա արդարացվածի կարգավիճակ ձեռք բերելու հիմքով իրեն նյութական վնասի հատուցման միջոցով իր խախտված իրավունքների վերականգնմանը, որպիսի իրավական վեճը բխում է ոչ թե հանրային, այլ մասնավոր իրավահարաբերություններից:

Վերոգրյալի հաշվառմամբ, նկատի ունենալով, որ սույն գործով Արտյոմ Սեդրակյանի և ՀՀ ոստիկանության միջև ծագած իրավական վեճը բխում է մասնավոր իրավահարաբերությունից, թիվ ՎԴ/6636/05/21 գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ՎԴ/6636/05/21 գործն ըստ հայցի Արտյոմ Սեդրակյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության՝ աշխատավարձի հասանելիք գումարները վճարելուն և դրանց հաշվարկը մինչև պարտավորության փաստացի կատարումը շարունակելուն պատասխանողին պարտավորեցնելու պահանջի մասին, ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ